յայտում է իւր սեպհական հայեացքներն ու համոզումները, իւր սեպհական հոգւոյ վիճակը, որովհետև ժողովրդական ստեղծագործութիւնը և՛ անհատի և՛ բազմութեան ներքին աշխարհի յայտարարն է։ Ժողովուրդը բանահիւսութեան մէջ պատրաստ նիւթ և ձև է գտնում իւր ներքինը արտայայտելու և հոգեկան պիտոյքներին գոհացում տալու [1]։ Մենք ականատես ենք եղել թէ ինչ տպաւորութիւն է թողնում ժողովրդական վէպը ունկնդիրների վերայ և ինչպիսի ոգևորութեամբ է պատմում պատմողը. հանճարեղ քարոզիչն անգամ հաղիւ կարողանայ այն քաղցր տպաւորութիւնը թողնել, այն հանգիստ խորհրդածութիւնները առաջացնել ունկնդիրների մէջ, ինչպէս ժողովրդական վէպի լաւ պատմողը։ Ժողովրդական վէպը վառում է ունկնդիրների ազգասիրական զգացումները, ոգևորում է նոցա առաքինութեան յաղթանակներով, զարթեցնում է նոցա մէջ բոլոր այն բարձր կողմերը, որ պատկերացրած է հերոսների անձնաւորութիւնների մէջ։ Այժմ հասկանալի պիտի լինի, թէ ինչու Հոմերոսի ստեղծագործութիւնները այնքան յարգի էին հին Յոյների մէջ։ Իլիականը Յոյնի համար և պատմութիւն էր և դիցաբանութիւն և բարոյական սկզբունքների աղբիւր. իսկ Իլիականը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ Յոյն ժողովրդի անգիր բանահիւսութեան մի գեղեցիկ արձան, որի մէջ այնքան հրաշալի կերպով մարմնացած էին Յոյնի կատարելութիւնները։ Ռուստեմը, Զոհրաբը հին Պարսկի հոգեկան մրցման ներկայացուցիչներն են, հին Պարսկի վսեմ ձգտումների և կրօնական հայեացքների մարմնացումը։ Ռոլանդը ասպետ Ֆրանսիացու ազնուութեան, հայրենասիրութեան, հաւատարմութեան և քաջութեան կատարելատիպն է. Խանդուդ Խաթունն ու Մարգարիտը Հայ կնոջ հաւատարմութեան և ընտանեկան կեանքի մաքրութեան նշանաբաններն են։

Ոչ սակաւ նշանակութիւն ունին ժողովրդի համար և աւանդութիւնները. դոքա նորա սրբութիւններն են, որ սերունդէ սե-

---

[1]) Буслаевъ-ի Истор. Очерки.